

# ՇԻՐՎԱՆՋԱԴԵԻ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ԱԿՆԱՐԿԸ

## Գ. Ա. ՄԱԴՈՅԱՆ

1915 թ. հունվարի 5-ին «Բաբո» ռուսերեն թերթում տպագրվել է Ալեքսանդր Շիրվանզադեի մի ուշագրավ պատերազմական ակնարկը, որը մերկայացվում է հայերեն թարգմանությամբ:

Առաջին Ռամաշխարհային պատերազմի սկզբում Թուրքիան չեզոքություն է հայտարարում և միաժամանակ գաղտնի դաշինք կնքում Գերմանիայի հետ, նպատակ ունենալով վերջինի օգնությամբ իրականացնել իր վաղեմի երազանքը՝ առաջին հերթին ընդարձակել իր սահմանները Կովկասում և ապա անցնել Միջին Ասիա:

Կովկասում ռուս-թուրքական ռազմաճակատը ձգվում էր 720 կիլոմետր երկարությամբ՝ Բաթումից մինչև Ուրմիա լիճը: Օգտագործելով առիթը, որ ռուսական գլխավոր ուժերը զբաղվում են գերմանական ռազմաճակատում, իսկ Կովկասում դրանց թիվը 200 հազարից ավելի չէ, Թուրքիայի ռազմական մինիստր Էնվեր փաշան անցավ երրորդ բանակի գլուխ և արշավեց դեպի Սարիղամիշ՝ ռուսական բանակների թիկունքը: 1914 թ. դեկտեմբերի 22-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 18-ը կատաղի կռիվներ ծավալվեցին Սարիղամիշում, որտեղ թուրքական երրորդ բանակը գլխովին ջախջախվեց:

Մրեսում տարի հետո հրատարակած իր հուշերում այդ բանակի 9-րդ կորպուսի 29-րդ դիվիզիայի հրամանատար Արիֆ Բավտինը գրել է. «Սարիղամիշի ողբերգությունն ավարտվեց երրորդ բանակի երկու ընտիր կորպուսների լրիվ ոչնչացմամբ»: Դրանով ավարտվեց ռուս-թուրքական ռազմաճակատի գործողությունների առաջին փուլը: Սարիղամիշի, Կարակուրգանի մարտերում երրորդ բանակի 90 հազար զինվորներից սպանվեցին, ցրտահարվեցին և գերի հանձնվեցին 78 հազար հոգի: Ստամբուլում հայտարարվեց ընդհանուր ազգային սուգ: Իրադարձություններն իրենց արձագանքը գտան թուրքական բանահյուսության մեջ: Ժողովուրդը դառնությամբ երգեց.

Ըստամբոլ, Ըստամբոլ,

Ավերակ մնաս:

Կուրանայիր, Էնվեր փաշա,

Զորքդ ո՛ր մնաց ..

Պատերազմի երկրորդ փուլը ոչինչ չբերեց թուրքական զորքերին: Սարիղամիշի ճափ կատր պահող 10 և 11-րդ կորպուսների մնացորդները հավաքելով, Էնվերը փորձեց 18 հազար մարդով Կարակուրգանի և Բարդեզի մատույցներում հակահարձակման դիմել, բայց պարտություն կրեց և նախկին հզոր բանակի մնացորդները գնդապետ Հաֆիս Հաքք-բեյին հանձնելով, խույս տվեց գերի հանձնվելու վտանգից:

1915—1916 թթ. ընթացքում ռազմաճակատի թուրքական մյուս զորամիավորումները մասնատվեցին: Փախուստի մատնվեցին և կոտորվեցին: Հատկապես մեծ դեր կատարեցին հայ կամավորական ջոկատները: Ռուսական բանակի կազմում անձնվիրաբար մարտնչում էին հայկական կամավորական յոթ հեծյալ և հետևակ ջոկատներ: Առաջին ջոկատը 1200 հոգով ղեկավարում էր ազգային հերոս Անդրանիկը, որ հրամանատարության առաջադրանքով կռվում էր ռազմի ամենադժվարին կետերում: Մյուս ջոկատները տարբեր փուլերում ղեկավարել են ազգային հերոսներ՝ Քեռին (Գավաֆյան Արշակ), Խանասարցի Վարդանը (Մեհրաբյան), Համազասպը (Սրվանձության), Գրիգոր Ավշարյանը, Հայկ Բժիշկյանը (Գայ), Հովսեփ Արղությանը: 1916 թ. փետրվարի 16-ին ռուսական զորքերը գրավեցին Կարինը՝ հոգս ցնդեցնելով թուրք հրամանատարության՝ Կովկասին տիրանալու ցնորական ծրագիրը:

Ռուս-թուրքական ռազմաճակատում հայ կամավորների սխրանքին մեզանում առաջին անգամ հրապարակայնորեն անդրադարձել է Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի

1981 թ. հրատարակած «Հայ ժողովրդի պատմությունը» (6-րդ հատոր), որտեղից և քաղված են վերը հիշատակված տվյալները:

Ծիրվանգաղեի ակնարկը գրական առաջին հուշարձանն է՝ նվիրված ճակատամարտի սկզբնավորմանը և հայկական կամավորական ջոկատների սխրանքին:

1914 թ. նոյեմբերի վերջերից շուրջ քսան օր Հայոց ազգային բյուրոյի հանձնարարությամբ Հովհ. Թումանյանի և այլոց հետ գտնվելով ռազմաճակատում, Ծիրվանգաղեան Քրիստափոր Վերմիշևի «Բաքու» թերթում, այլ հողվածների թվում տպագրել է նաև այս ակնարկը: Այդ ուղեգնացության արդյունքն են նաև նույն օրերին հայկական մամուլում տպված «Պատերազմի վայրերով», «Ինչ հեշտ է», «Եղկելի է» և այլ հողվածներ:

## ՄԱՐԻՂԱՄԻՇԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՍԿԻԶԲԸ

(Մեր թղթակցից)

*Մենք Սարիղամիշ հասանք՝ այսօրվանից նշանակալից դարձած ճակատամարտի սկսվելուց երկու օր առաջ:*

*Ավելի քան երեք շաբաթ, գտնվելով ձախակողմյան մարտական դիրքերում, մեր նպատակների համար անհրաժեշտ էր լինել աջակողմյան ռազմաճակատում:*

*Մենք վեց հոգի էինք՝ Խորեն Եպիսկոպոս Մուրադբեկյանի գլխավորությամբ: Մեզնից երեք հոգու, այդ թվում նաև ինձ, հյուրընկալեց տեղի վաճառականներից Քաղևոս Մելիք-Ստեփանյանը, իսկ մյուսները տեղավորվեցին ինչ-որ ունևոր գյուղացու տանը:*

*Որոշված էր մեկ օր հատկացնել Սարիղամիշին: Ես ամսի 12-ին առավոտ կանուխ ուղևորվեցի Մանազկերտ և այնտեղից էլ անցա թուրքական տարածքը: Այն մասին, որ այդ իսկ օրն սկսվել էր մինչ այդ թուրքերի դեմ մղված ճակատամարտերից մեծագույնը՝ մենք ոչինչ չգիտեինք, ուստի միանգամայն հանգիստ պառկեցինք քնելու:*

*Կարծեմ առավոտյան ժամը 6-ը դեռ չկար, համենայն դեպս դուրսը դեռ մութն էր, երբ իմ սենյակի դուռը աղմուկով բացվեց, և ներս թափվեցին այլ տեղերում գիշերած մեր ընկերները:*

— Զարթնի՛ր, թուրքերը գալիս են, — ասաց նրանցից մեկը:

*Ես քնած չէի: Իմ պատուհանի տակ շների ոռնոցը ամբողջ գիշերը ինձ հանգիստ չէր տվել: Ի դեպ ասած՝ ամեն տեղ, ուր պատերազմական գործողություններ էին տեղի ունեցել, գիշերը շները սոսկալի ոռնոց էին բարձրացնում: Այդ ոռնոցը հատկապես ուժեղ է լքված քրդական գյուղերում և ճնշող տպավորություն է գործում:*

*Մի անգամ մի գյուղում ես նկատեցի հետևյալը: Երեկոյան շներից ամեն մեկը բարձրանում էր իր տիրոջ տափակ կտուրի վրա և նստելով հետին թաթերին, սկսում էր երկար կաղկանձել: Հետո գիշերը նրանք խմբվում էին մի տեղ: Նրանցից մեկը կանգնում էր մեջտեղում և սկսում էր ոռնալ, իսկ մյուսները նրան շրջապատած՝ խմբով ձայնակցում էին, ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես հնում ասիական տներում կանայք ողբում էին իրենց ննչեցյալների վրա: Առաջապահ՝ դիրքերում կամա թե ակամա վարժվում ես ամեն տեսակի անակնկալների, ուստի թուրքերի Սարիղամիշ գալու լուրը ինձ բոլորովին չըզարմացրեց: Հագնվեցի և որոշեցի գնալ երկաթուղու կայարան: Ես կարծում էի, որ միայն այնտեղ կարելի է ստանալ քիչ թե շատ հավաստի տեղեկություններ:*

*Երբ մենք սպասում էինք լույսը բացվելուն և մեր պատվիրած կառքին, մեզ ներկայացավ սպա Դ-ովր, որը ևս մեզ հետ գալու էր Մանազկերտ: Նա*

մեզ բացատրեց, որ տեղի է ունեցել այն, ինչ միայն քչերի մտքով էր անցնում. այսինքն՝ որ թուրքերը մեծ ուժով շարժվում են դեպի Սարիղամիշ և որ նրանց նպատակն է մեր գլխավոր զորաբանակի համար ստեղծել Սեդանի նրման ինչ-որ բան:

— Իմ հետախուզության համաձայն՝ Ճորոխի կոիվները լոկ ավանտյուրա չէին, — շարունակեց նա, — ինչպես այդ կարծում էին և կարծում են շատերը, այլ նախերգանքը այն մեծ ողբերգության, որ ահա տեղի է ունենում: Սակայն վախենալու պատճառ չկա. մեր զորակայանն այդ մասին արդեն տեղյակ է: Հիմա ամբողջ խնդիրն այն է, որ ժամանակին օգնություն հասցվի Ղարսի կողմից:

— Բարեբախտաբար մեր ձեռքին է երկաթգիծը, — նկատեց ինչ-որ մեկը:

— Որը թուրքերը շուտով կարող են կտրել, — լավեց մի անծանոթ ձայն: Ես շրջվեցի նրա կողմը: Դռների մոտ նստած էր խունացած բաճկոնակով և պարկի պես լայն անդրավարտիքով մի հաստափոր հայ: Ոչ ոք չէր նկատել նրա՝ սենյակում հայտնվելը:

— Իսկ դուք ո՞րտեղից գիտեք, որ նրանք կհարձակվեն երկաթգծի վրա, — հարցրեց սպան, նկատելիորեն անհանգստացած:

— Դժվար չէ կռահելը: Դեպի Չատախ կայարանը գնացող ճանապարհ կա, որ լավ հայտնի է տեղացի լազերին և քրդերին: Ահա նրանք էլ դա ցույց կտան թուրքական զորքին: Չէ՞ որ կասկածից վեր է, որ այստեղ մուսուլմաններն ուղղակի աշակցում են իրենց հավատակիցներին:

Ինչպես հայտնի է, այդ ենթադրությունը մասամբ ճիշտ դուրս եկավ, երբ կրակի տակ առնվեց Չատախ կայարանը և գերվեց մեր սանիտարական գրնացքը:

Մեզ մոտ եկավ մի երիտասարդ՝ հայ կամավորի համազգեստով: Պարզվեց, որ նա Ք-ի ջոկատից է և պատերազմի դաշտից հենց նոր է հասել Սարիղամիշ: Նա ոչ վիրավոր էր, ոչ էլ կոնտուզահար, բայց այնպես էր հյուծված, որ կիսամեռ մարդու տպավորություն էր գործում: Երկարատև մարտից հետո խեղճը ամբողջ օրը և ամբողջ գիշերը սոված, առանց հանգստանալու անցել էր խոր ձյունով ծածկված լեռներով և կիրճերով:

Շնչակտուր լինելով և դժվարությամբ շունչը տեղը բերելով, նա մեզ համառոտակի պատմեց Իդից սկսված և Բարդոսում, այսինքն Սարիղամիշից քսան վերստ այն կողմ ծավալված մարտերի մասին:

— Ուրեմն թուրքերը մոտի՞կ են, — հարցրեց ինչ-որ մեկը:

— Հիմա նրանք պետք է լինեն ութ կամ տասը վերստ հեռու:

— Իսկ ի՞նչ եղավ Ք-ի ջոկատը:

— Այն բաժանվեց երեք մասի: Մի մասը զոհվեց, մյուսը վիրավորվեց և հասավ այստեղ. իսկ երրորդը Ք-ի հետ բարձրացավ լեռները:

— Իսկ թուրքերը շա՞տ են:

— Չեմ կարող ասել. բայց պետք է որ շատ լինեն. նրանք լցրել են Բարդոսի լեռներն ու կիրճերը:

Մեր տրամադրության տակ կար մեկ կառք, իսկ մենք 11 հոգի էինք, հաշված նաև մեզ հյուրընկալող վաճառականի տազնապահար ընտանիքը, որ որոշել էինք մեզ հետ տանել: Ընդ որում երկաթուղու կայարանը երեք վերստ հեռու էր: Այսպես թե այնպես, մենք հերթով հասանք այնտեղ երեք ժամվա ընթացքում:

Երբ ես անցնում էի ավանով, ոչ մի տազնապ չէր նկատվում: Շուկան լրցված էր տեղացիներով և զինվորներով, որոնք հանգիստ մթերքներ էին գնում: Հավանաբար ոչ ոք դեռ ոչինչ չգիտեր սպասվող վտանգի մասին:

Կայարանում մենք հանդիպեցինք տարբեր աստիճանի սպաների և բժիշկների մի մեծ բազմության: Կառամատուցում հանգիստ շրջում էին բարձրաստիճան պետեր... Գթության քույրերը թեյի ժամանակ աշխույժ գրուցում էին սպաների հետ: Այն քույրերը, որոնցից մի քանիսին վիճակված էր ընկնել թուրքերի ձեռքը և մի քանի օր մաքառել կյանքի ու մահվան միջև:

Կառամատուցում կանգնած էր մի դատարկ մարդատար կառախումբ: Նրա հսկա շոգեքարշը փնշացնելով գնում դալիս էր և գոլորշի ժայթքում դեպի անամպ երկնակամարը:

Հրաշալի պարզ, արևոտ օր էր, թեթև հաճելի սառնամանիքով: Սպիտակ սավանով ծածկված շրջակա բուրններն ու կիրճերը առանձնահատուկ պայծառությամբ ընդգծում էին եղևնիների մուգ կանաչ թավշյա գորգերը: Առանձնակի կանգնած ծառերից մի քանիսը հսկաներ էին թվում, որ հսկում էին ավանի անդորրը: Թարմ ձյունը միլիարդավոր աղամանդյա աստղիկներով փայլում էր որպես արքայական հարսնացուի հարսանեկան հանդերձանք:

Ինքնահատուկ շմեցուցիչ դեղեցկություն, որ կարող էր նսեմացնել ձմեռային Զվիցցերիայի ամենաշքեղ բնակարանների փայլը:

Այո՛, այստեղ շատ բան կա արվեստագետի արբեցման համար: Միայն զարմանալ կարելի է, որ մինչև հիմա Կովկասի բնակարաններից ոչ մեկը, շափից ավելի տարվելով իրենց «Արարատով», «Կազբեկով», «էլբրուսով» և «Աևանա լճով»՝ չի մտածել կտավին հանձնել ձմեռային Սարիղամիշը:

Ամենուր խոսակցությունը պտտվում էր սովորական հարցերի շուրջ: Ակնարկություն անգամ չկար հակառակորդի մոտենալու մասին: Ամենուր թագավորում էր վեհապանծ անդորրություն, որ թերևս հատուկ է ռուսական ոգուն: Երիտասարդ, գրեթե անբեղ սպաներ, սառնամանիքից թեթևակի շիկնած թշերով, ուրախ զբոսնում էին կառամատուցում: Ինչ-որ տեղից հայտնված շքեղ հագնված կանայք շրջապատվեցին գորշ շինելների խմբով և սկսեցին անհոգ կատակել նրանց հետ:

Ամեն ինչ սովորականի պես էր՝ լուռ, հանգիստ: Միայն մերթընդմերթ անդորրը խախտում էր շոգեկառքի շշկը՝ սուր, ծակող սուլոցով:

Մինչդեռ այնտեղ, կայարանից քիչ հեռու, կատարվում էր ռուս զինվորի աննկատելի աշխատանքը: Արագ, բայց անաղմուկ՝ պահեստային ջոկատներից մեկը պատրաստվում էր առաջիկա մարտին: Պահեստային երիտասարդ պրայորշչիկը փամփուշտ էր բաժանում: Մոտեցան բաբվեցիների ներկայացուցիչները և խնդրեցին զինվորներին բաժանել իրենց բերած ծխախոտը:

Ժամանակ առ ժամանակ, կառամատուցի այն կողմում գտնվող գեներալ Մ-ն աչքերին էր դնում երթային խոշոր հեռագիտակը և դիտում հեռուն: Նրան շրջապատող սպաներն ուշադիր հետևում էին նրա դեմքի արտահայտությանը: Բարձրահասակ, թիկնեղ, իր անվրդով տեսքով նա բոլորին հավատ էր ներշնչում:

Լեռան զառիթափում, ուր վերին Սարիղամիշն անջատվում էր ներքինից, երևաց մի երկարավուն ժապավեն: Սպիտակ ֆոնի վրա նա նման էր գալարվող հսկայական սև գորշագույն օձի:

— Թուրքերը, — շնչաց բաբվեցիներից մեկը:

— Ոչ, — ժպտաց երիտասարդ պորուշիկը, — դա մերոնք են նրանց ընդանայ գնում:

Քառորդ ժամից հետո օձը զառիթափից վար սողաց և անհետացավ մեզանից դեպի ձախ գտնվող կիրճում: Տեսնվում էր միայն նրա լայն պոչը: Դա գումակն էր: Նա այնտեղ էլ մնաց մինչև ուշ գիշեր:

Մոտավորապես երեկոյան ժամը շորսին դղրդաց առաջին համազարկը:

կայարանի շենքում գտնվող բոլոր մարդիկ կառամատույց լցվեցին և սկսեցին նայել դեպի Վերին Սարիղամիշի կողմը, որտեղ սկսվում էր նշանավոր ճակատամարտը:

Սկզբում փոխհրաձգությունը թույլ էր, բայց գնալով ավելի էր սաստկանում: Կրակում էին համազարկերով: Կռվողները չէին երևում, քանի որ նրանց մեզանից ծածկում էր դիմացի բլուրը: Բայց զգացվում էր, որ մարտը գնալով ավելի ու ավելի էր մոտենում մեզ:

— Անտարակույս, նախ կամենում են գրավել կայարանը և ոչ ավանը, ասում էին սպաները:

Սակայն մի ժամ շանցած լեռան վրա, արևի վերջին ճառագայթների տակ երևացին առաջին վիրավորները: Նրանց բերում էին երկու կողմից թևանցուկ արած: Հավանաբար լեռան վրա ձյունը ծածկված էր սառցակեղևով, որովհետև ինչպես վիրավորները, այնպես էլ նրանց բերողները երբեմն սայթաքում էին և ընկնում:

Կանանց լացը իմ ուշադրությունը շեղեց արյունալի տեսարանից: Ես ետ շրջվեցի:

Միջին տարիքի նրբակազմ տիկիներին մեկը հրաժեշտ էր տալիս իր որդուն՝ մի տակավին անբեղ սպայի: Պատանի մարտիկը ջանք էր գործ դնում հանգստացնելու մորը: Բայց նա մղկտալով կրկնում էր.

— Ես գիտեմ, ամեն ինչ գիտեմ: Դա որևէ ավազակախումբ չէ, այլ ամբողջովին կանոնավոր բանակ: Նրանք գնդացիներ և թնդանոթներ ունեն: Իզուր ես ինձ մխիթարում:

— Դե, թեկուզ և թնդանոթներ, հետո ինչ,— ասում էր պատանի սպան:— Պարզ չէ՞, որ պետք չէ սզալ կենդանի մարդու համար: Դե, ցտեսություն. ինձ կանչում են:

Եվ ողջագուրվելով տիկնոջ հետ՝ նա կորավ ամբոխի մեջ:

Կառամատույցով անցկացրին կարծեմ Բարդոսի տակ գերված քրդերի և ասկյարների մի խումբ և լցրին ապրանքատար վազոնները: Նրանցից մեկը փայլուն կոճակներ ունեցող գորշ շինելով ու երկարաճիտ կոշիկներով, ծխախոտը բերանին, հաղթական հերոսի արհամարհական հայացքներ էր գցում շրջապատողների վրա: Մյուսները ցնցոտիների մեջ էին, քրդական սովորական կարճ վերմակներով փաթաթված, բայց մարմնեղ, պնդակազմ մարդիկ էին:

Գերիների մեջ կային 7 թուրքահայեր: Անցնելիս նրանք մեզ խնդրում էին բարեխոսել իրենց ազատելու համար: Ցավոք, մենք չէինք կարող տեղն ու տեղը նրանց խնդրանքը կատարել: Նախ պետք էր պարզել, որ նրանք իրոք հայեր են: Մեզ հայտնի էր, երբեմն քրդերը, որոնց մեծ մասը լավ է տիրապետում հայերենին, թյուրիմացության մեջ են գցում սպաներին և դրանով ազատվում:

Ինչքան էլ որ մեզ համար հետաքրքրական լիներ, մենք չէինք կարող Սարիղամիշում մնալ, առավել ևս առաջ գնալ:

Փոխհրաձգությունից երևում էր, որ կռիվն սկսում էր մոտենալ, իսկ կայարանում կանգնած էր միայն մեկ, թերևս ամենավերջին գնացքը, մտածում էինք մենք: Այդ ընթացքում խուճապը կատարել էր իր գործը: Ամբողջ Սարիղամիշը փախչում էր դեպի կայարան, և արդեն ամբողջ կառամատույցը լրցված էր կանանցով ու երեխաներով:

Գեներալ Մ-ի հրամանով մեզ և Բաբվի ներկայացուցիչներին տրվեց հատուկ վազոն, և մենք կարգադրեցինք կառամատույց բերել մեր իրերը, որ պատրաստ լինենք մեկնելու:

Այդ ժամանակ ինչ-որ մեկը ինձ հայտնեց, որ Մանազկերտից եկել է կորպուսի զորակայանում ծառայող պահեստի պրապորշչիկ որդիս: Ծս գնացի այդ իրարանցման մեջ նրան փնտրելու: Նրան հայտնել էին, որ ես Մանազկերտ գնալ չեմ կարող, ուստի ինքը ավտոմեքենայով եկավ ինձ տեսնելու:

Խոստովանում եմ, որ այդ հանգամանքն այնքան էլ շուրախացրեց ինձ, որովհետև ես վախենում էի, որ թուրքերը շուտով կկտրեն Մանազկերտի ճանապարհը, և նա հնարավորություն չի ունենա այնտեղ դառնալու: Հետագայում պարզվեց, որ իմ ենթադրությունները մասամբ ճիշտ էին:

Երեկոյան ուղիղ ժամը վեցն անց կես հրաձգությունը դադարեց:

— Սովորաբար մութը վրա հասնելուն պես թուրքերը դադարեցնում են կոփվը,— մեզ բացատրեց սպան:

Այս անգամ այդպես չեղավ:

Մենք Սարիղամիշից մեկնեցինք երեկոյան ժամը յոթին, իսկ կեսգիշերին մարտը վերսկսվեց: Սկսեցին որոտալ թնդանոթները և գնդացիները:

**ԾԻՐՎԱՆՁԱԴԵ**

Г. А. МАДОЯН—Фронтовой очерк Ширванзаде.— С конца ноября 1914 г. по поручению Армянского национального бюро вместе с группой армянской интеллигенции Александр Ширванзаде отправился на фронт. Полученные впечатления он изложил в статьях и очерках на русском и армянском языках. В армянском переводе представлен очерк армянского классика «Начало сарикамышской битвы», который был опубликован 5-го января 1915 года в газете Вермишева «Баку». Это был первый литературный отклик на военные события.